# 149 Երախտապարտ ենք փրկանքի համար

(Ղուկաս 22:20)

1. Այսօր, Եհո՛վա Հայր,
   գահիդ առաջ կանգնած՝
   Մենք հիշում ենք սերը քո
   մեր հանդեպ ցույց տրված։
   Դու տվեցիր Որդուն քո թանկ,
   որ մենք ապրենք։
   Այդ մեծագույն սուրբ զոհը
   մեր սրտերում պահենք։

**(ԿՐԿՆԵՐԳ)**

*Նա ազատեց մեզ իր կյանքով,*
*Իր թանկագին արյան գնով։*
*Եհո՛վա, քեզ*
*երախտապարտ ենք մենք ամբողջ սրտով։*

2. Որդիդ հոժար կամքով
   երկրի վրա ապրեց
   Ու սիրուց մղված՝ մարդկանց
   փրկագինը տվեց։
   Մենք խարխափում էինք խավար
   այս աշխարհում։
   Հիմա մեր հույսը վառ է.
   կյանքն է մահին հաղթում։
   **(Կրկներգ)**

(Տես նաև Եբր. 9:13, 14; 1 Պետ. 1:18, 19)։

snylpnw-REA No. 149 12/15
© 2015 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania